

Պատկ· 107

մաբ յայտնեցինք, որ կարող են նրանք հեթանոսական չրջանին պատկանել: Ո՞ր տեղից են նրանք գալիս, դժուար է մեզ առ այժմ որոշել, բայց հաղուագիւտ, եւ որոշ նմանութիւններ մատնանշում են, թէ ո՞րտեղ պէտք է որոնել: Մենք կարծում ենք, որ նրանք ծագմամբ հետիտեան կամ հաթեան պիտի լինին. ձեւով նման կոթողներ դանուած են կեսարիոյ չուրջը, որոնցից երկուսը մէջ է բերում Ալպոյաճեանը նոյն քաղաքի պատմութեան նուիրած իւր աշխատութեան մէջ:* Ապա հիւսիսային Արաբիայի Տէմանի (Teima) յուշարձանը, Ասորեստանեայց տիրապետութեան վերջին չրջանից, է· դար Ք.Ա· (Պատկեր 107):** Վերեւի ֆիգուրը Հադամի Քալմ աստուածն է Ասորեստանեայց հագուստով, իսկ ներքեւի մասում կոթողը կանգնող քուրմը: Քանդակման ձեւով եւ մասերի բաժանումով նման մեր կոթողներին: Երրորդ մի կոթող դիտենք Անդրյորդանանեան, հին Նաբաթացիների երկրում, Khirbett et Tannur–ի մէջ, քանդակման ոճը յունա–հռոմէական, բայց ձեւը նման մեր կոթողներին: Նաբաթացիք Սելեւկեան չրջանում անկախ պետութիւն էին եւ վաճառականական կենդանի յարաբերութիւն ունէին իրենցից հարաւ եւ հիւսիս գտնուած երկիրների հետ: Նրանց մայրաքաղաքն էր Պետրան, որի աւերակները նրանց ծաղկման եւ քաղաքակրթութեան ապացոյցներն են տալիս: Նրանց թագաւորները Հարեթ կամ Արետաս էին կոչւում, որի ներկայացուցիչը Դամասկոսում կամեցաւ բռնել Պօղոս առաքեալին, բայց պատուհանի վանդակից կախուեցաւ եւ փախաւ նորա ձեռքից (Բ· Կորնթ· ԺԱ· 32–33): Նաբաթացիք սկզբում Սելեւկեան մշակոյթին էին ենթարկուած, ապա հռոմայեցիների կողմից նուաճուելուց յետոյ՝ հռոմէական:† Այս չրջանի մի գործ է մեր ցուցադրած բեկորը (Պատկ· 108), որ առել ենք Nelson Gluck–ի յօդուածից:†† Մի կողմը կայծակի աստուածն է Հադադ, բայց Զեւսի ձեւով, միւս կողմը Տիւխէն: Հադադը Ասորեստանեայց աստուածն էր, կրօնական մի պատկերացում, որ գալիս էր հեթանոսներից, որպէս հեռաւորութիւն Տէշուբի, բայց արտաքին ձեւակերպութիւնն ու հանդերձանքը յունա–հռոմէականի փոխարկուած: Անդրյորդանանեան մոաբիների նմանութիւններ Հայաստանում մատնանշել է եւ Strzygowski–ն, բոլորովին անկախ այս հանդամանքից:

---

*Պատմութիւն Հայ կեսարիոյ· Ա· հատոր· եր· 78· 85:

**Dr. Hugo Winckler. Das alte Westasien. 1901. Leipzig. Wien. եր· 232:

†Անդ 239–40:

††The National Geographie Magazine, 1944, February, p. 248.